ԿՐԹԱԿԱՆ

ԿԸՆՁԵՌՎԻ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎՈՎ ՎԵՐԱՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ԱՆՑՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ինչպես նշեց Թամար Սանիկիձեն, մանկավարժը մասնագիտական զարգացման համար պիտի անցնի չորս փուլ եւ մոտ ապագայում մանկավարժությունը կդառնա ամենահեղինակավոր ու ամենաբարձր վարձատրվող մասնագիտությունը:

Նախարարը խոսեց նաեւ Կրթության նախարարության ապագա ծրագրերի եւ Վրաստանում առկա համալսարանների նշանակության մասին:

Հաշվի առնելով, որ տվյալ տարածաշրջանը հիմնականում բնակեցված է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներով, շեշտը դրվել է այն առավելությունների վրա, որոնք նրանց համար հասանելի կլինեն համակարգի բարեփոխման ընթացքում, նշել են Վրաստանի ԿԳՆ-ում: Մինչ այժմ հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար նախատեսված չէր որակավորման քննությունները մայրենի լեզվով հանձնելու հնարավորություն, ինչը ազդում էր նրանց մասնագիտական գործունեության ու մոտիվացման վրա:

Իսկ այժմ մանկավարժների մասնագիտական զարգացման նոր քաղաքականության շրջանակում պարզեցվելու են վրացերենի ուսուցման հնարավորությունները այն տարածաշրջանների դպրոցներում, որտեղ բնակվում են ազգային փոքրամասնություններ, ինչպես նաեւ ուսուցիչներին հնարավորություն է ընձեռվելու մասնագիտական վերարտակավորում անցնել մայրենի լեզվով: Նշվում է, որ նոր հնարավորություններ են ստեղծվելու երկու լեզուներին տիրապետող մանկավարժների համար: Բոլոր այս ծրագրերն սկսելու են գործել նոր ուսումնական տարվանից, այդ թվում՝ Սամցխե-Ջավախեթիի համալսարանում:

Հանդիպումն անցկացվեց Սամցխե-Ջավախեթիի պետական համալսարանում, որն ընթացավ հարց-պատասխան ձեւաչափով: Այս հանդիպումից հետո Վրաստանի կրթության նախարարն այցելեց Ադիգենիի շրջանի Առալ գյուղում կառուցվող դպրոցը:

ՄԵԿՆԱՐԿԵԺ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԱԶԱԿԱԾՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Եվրամիությունը Վրաստանում սկսել է 36 ամսվա համար նախատեսված նախագիծ, որը ապահովելու է երկրում մասնագիտական կրթության եւ վերապատրաստման, ինչպես նաեւ աշխատանքի շուկայի բարեփոխման գործընթացը:

Նախագիծը տեխնիկական օգնություն եւ աջակցություն կցուցաբերի նորամուծությունների զարգացման ու կառավարման եւ վերահսկողության քաղաքականությանը, մարդկային ռեսուրսների կառավարմանն ու բարեփոխումների արդյունքների գնահատմանը:

Նախագծի շնորհանդեսը իրականացվեց մարտի 5-ին: Շնորհանդեսին մասնակցեցին Վրաստանում Եվրամիության պատվիրակության ղեկավարի պաշտոնակատար Բորիս Յարոշեւիչը, Վրաստանի աշխատանքի, կրթության նախարարությունների, միջազգային կազմակերպությունների, մասնավոր հատվածի եւ ոչ կառավարական կազմակերպությունների շահագրգռված անձինք:

Եվրամիության կողմից 2,7 միլիոն եվրոյով ֆինանսավորվող բյուջեն կտրամադրվի Վրաստանի կրթության եւ գիտության, ինչպես նաեւ աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական ապահովության նախարարություններին:

ՄԵԾ ԵՂԵՌՆ-100

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈ՝ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ



Մարտի 7-ին, կաթողիկե լատին եկեղեցու Հարավային Կովկասի վարչության Թբիլիսիի Սուրբ Պողոս-Պետրոս մայր տաճարում, Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ եկեղեցու Վիրահայոց թեմի հետ համատեղ տեղի ունեցավ Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակի երեկո:

Քույր եկեղեցու բակում հավաքված հավատացյալները դիտեցին նախամուտքում կազմակերպված Մեծ Եղեռնի մասին պատմող լուսանկարների ցուցադրությունը:

Բազմամարդ եկեղեցում Հիշատակի երեկոն սկսվեց միասնական Տերունական աղոթքով: Հարավային Կովկասի կաթողիկե լատին եկեղեցու վարչության առաջնորդ Գերաշնորհ Տեր Ջուզեպպե արքեպիսկոպոս Պազոտտոն՝ ողջունելով ներկաներին, խոսք ասաց օրվա խորհրդի մասին, հիշատակելով անցյալ դարասկզբին հայ ժողովրդի, այնուհետեւ հրեա եւ ուրիշ ազգերի նկատմամբ իրականացված եղեռնագործությունը, դատապարտեց մարդկության դեմ սանձազերծված ցեղասպանության ամեն տեսակ դրսեւորում:

Այնուհետեւ կատարվեց հոգեհանգստյան կարգ եւ աղոթք բարձրացվեց Օսմանյան Թուրքիայի կողմից Արեւմտյան Հայաստանում իրականացված Ցեղասպանության նահատակների հոգիների խաղաղության համար:

Վրաստանի հայ մտավորականների միության նախագահ, պատմաբան Ենոք Թադեւոսյանը հանդես եկավ Հայոց Եղեռնի մասին բանախոսությամբ: Իր ստեղծագործություններն ընթերցեց բանաստեղծուհի Մարինա Մոսեսովա-Կիրակոսյանը:

Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը երախտիքի խոսքեր ուղղեց այն ժողովուրդներին եւ երկրներին, ովքեր կիսում են հայոց վիշտը, այն պետություններին ու ազգերին, ովքեր ընդունել ու ապաստանել են մազապուրծ փրկված հայությանը: Նահատակների հիշատակի ոգեկոչման երեկոներ կանցկացվեն նաեւ մյուս քույր եկեղեցիներում:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՀԱՅ-ՎՐԱՑ ՎՐՁՆԱՐՎԵՍՏԻ ԳԱՆՁԱՐԱՆԸ ՀԱՐՍՏԱՑՆՈՂ ՆՈՐ ԵՐԵՒՈՒՅԹ

Առանձնահատուկ էր Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարությունում տեղի ունեցած միջոցառումը:

Հայ ու վրաց մշակույթների ներկայացուցիչներն ու կերպարվեստի սիրահարները ներկա գտնվեցին «Թբիլիսի-Նոր Բաբելոն» ալբոմի շնորհանդեսին, որի էջերը ներկայացնում էին 20-րդ դարի երկրորդ կեսերին Թբիլիսիում ապրող եւ ստեղծագործող հայ գեղանկարիչների գործերը:

Նախագիծը իրականացվել է Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարության, ՀՀ-ի, Վիրահայոց թեմի կրթա-մշակութային «Հայարտուն» կենտրոնի եւ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Աշոտ Արսենյանի բարձր հովանավորությամբ: Նախագծի հեղինակ եւ ղեկավար՝ երիտասարդ գեղանկարիչ Իրենա Օհանջանովա:

Միջոցառմանը մասնակցում էին Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարության փոխնախարար Մանանա Բերիկաշվիլին, Վրաստանի նախագահի խորհրդական Սոփիո Շամանիդին, ՀՀ արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Վրաստանում ՀՀ դեսպանության առաջին քարտուղար Արտակ Ղալաչյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի գրողների միության համանախագահ Մաղվալա Գոնաշվիլին, բանաստեղծ, թարգմանիչ Գիվի Շահնազարը, պաշտոնական այլ անձինք:

Վրացերեն, հայերեն, անգլերեն լեզուներով հրատարակված ալբոմը ընդգրկում է վերը նշյալ ժամանակաշրջանի վիրահայ կերպարվեստի նշանավոր հինգ դեմքերի՝ Լեւ Բոյախչեւի, Ալբերտ Դիլբարյանի, Ռոբերտ Կոնդախսազովի, Գայանե Խաչատրյանի, Ջուլեյկա Բաժբեուկ-Մելիքյանի ստեղծագործություններն ու դրանց տեսությունները:

«Թբիլիսի-Նոր Բաբելոն» ալբոմում, գեղանկարիչների հանրահայտ կտավների կողքին, տեղ են գտել այնպիսի գործեր, որոնք ցայսօր չեն ներկայացվել ոչ կատալոգներում եւ ոչ էլ Վրաստանի ցուցահանդեսներում:

Ալբոմում զետեղված են գործեր Վրաստանի, Հայաստանի, Ռուսաստանի՝ Ազգային թանգարաններից եւ՝ ԱՄՆ-ի պատկերասրահներից, գեղանկարներ՝ Գիվի Փարաստաշվիլու, Արչիլ Դարգիայի, Նունու Բենդուքիձեի եւ Շալվա Իսակաձեի հավաքածուներից, ինչպես նաեւ՝ Ալբերտ Դիլբարյանի, Լեւ Բոյախչեւի, Ռոբերտ Կոնդախսազովի՝ ընտանեկան ու Ջուլեյկա Բաժբեուկ-Մելիքյանի, Միհրան Դիլբարյանի, Մաղլեն Ցուշիտաշվիլու, Մերի Գուրգենիձեի՝ մասնավոր սեփականություն հանդիսացող կտավներից:

Ալբոմում ընդգրկված գեղանկարիչների՝ կյանքն ու մարդկային նկարագիրը վեր հանող հիանալի էսսեների հեղինակն է հայտնի գրող եւ արվեստագետ Դավիթ Անդրիաձեն. այդ գործերի շնորհիվ՝ «Թբիլիսի-Նոր Բաբելոն»-ը կարող է դիտվել գիրք-ալբոմ:

Գիրք-ալբոմի հայերեն տեքստի թարգմանիչը եւ խմբագիրը բանաստեղծ, թարգմանիչ Անահիտ Բոստանջյանն է: Անգլերեն թարգմանության հեղինակն ու խմբագիրն է Լալի Գեգեչկորին:

Մանանա Բերիկաշվիլու ողջույնի խոսքում «Ալբոմը» գնահատվեց՝ հայ-վրաց վրձնարվեստի գանձարանը հարստացնող երեւույթ:

«Ուրախ եմ, որ իմ, դեռ Վրաստանում ՀՀ-ի դեսպան եղած օրերին, ուրվագծած գաղափարը, այսօր դարձավ իրականություն: Մշակույթը պետությունների փոխհարաբերությունները կանխորոշող կարեւոր կամուրջներից մեկն է, ուստի շնորհավորում եմ եւ՝ մաղթում՝ այս տեմպով շարունակել»,- ասաց այդ օրերին Թբիլիսիում աշխատանքային այցով գտնվող ՀՀ արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանը:

Շնորհավորանքի եւ իրադարձության արժեւորման խոսքով հանդես եկավ Վրաստանում ՀՀ դեսպանության առաջին քարտուղար Արտակ Ղալաչյանը:

«Ուզում եմ գնահատանքս ու շնորհակալությունս բերել Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարությանը, որ աչքի լույսի պես պահում-պահպանում է նաեւ հայ ստեղծագործողների արարումները»,- ընդգծեց իր ելույթում Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: «Ուրախ եմ, որ, մասնակցելով այս նախագծին, զգացի՝ բարձր արվեստի եւ նրանով ամրագրված եղբայրության բերկրանքը»,- խոստովանեց թարգմանիչ Անահիտ Բոստանջյանը: Դավիթ Անդրիաձեն իր շնորհակալությունը բերեց թարգմանիչներին՝ բարեխիղճ այն աշխատանքի համար, որը նպաստել է տվյալ ալբոմի հաջողությանը:

Շնորհանդեսն ուղեկցվեց՝ ներկայացվող գեղանկարիչների կտավները ցուցադրող տեսահոլովակով:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՏԵՍԱԿԵՏ

ՎՐԱՍՏԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼԵԼՈՒ ՈՒԹ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ԱՄԵՐԻԿԱՑԻ ԼՐԱԳՐՈՂԻ ՀԱՅԵՑԱԿԵՏԸ

Ամերիկյան Houstonia կայքի լրագրող Բիլ Վիաթրաքը հրապարակել է հոդված Վրաստանի եւ Հայաստանի մասին՝ առանձնացնելով այն ութ հիմնական պատճառները, որոնց համար արժե այցելել այս երկրներ: Լրագրողը, ով այցելել է Բակուրիանի եւ Ծաղկաձոր, նշում է, որ իրեն պարզապես զարմացրել է այս երկրների հյուրընկալությունը եւ այն հիասքանչ տեսարժան վայրերը, որոնց կարելի է հանդիպել, եթե մեջդ կա մի փոքր արկածախնդրություն:

Անդրադառնալով այն ութ հիմնական առանձնահատկություններին, որոնք բնորոշ են տվյալ երկրներին, Վիաթրաքը նախ նշում է, որ ԱՄՆ քաղաքացին կարող է այստեղ հայտնվել առանց որեւէ վիզայի անհրաժեշտության՝ պարզապես գնալով օդանավակայան եւ հատելով սահմանը:

Որպես երկրորդ առանձնահատկություն նա խոսում է համաշխարհային ժառանգության մասը հանդիսացող հուշարձանների առկայության մասին: Լրագրողը փաստում է, որ տարբեր վանական համալիրներ մտնելն ու շրջելը մեծամասամբ անվճար է, իսկ վճարի առկայության պարագայում էլ այն չի գերազանցում 2 ԱՄՆ դոլարը:

Երրորդ առանձնահատկությունն էժան մեքենա վարձելու հնարավորությունն է: «Եվրոպայի մեծ մասում դու կծախսես կրկնակի կամ եռակի ավելի գումար, քան այստեղ: Մեքենաները հեշտ է վարձել, եւ մի քանի կազմակերպություններ թույլ են տալիս վարել իրենց մեքենաները սահմանների ներսում, եթե դու չես ցանկանում օգտվել հասարակական տրանսպորտից»,- գրում է Վիաթրաքը:

Չորրորդ առանձնահատկությունը սահելու հնարավորությունն է: Լրագրողը շեշտադրում է Ծաղկաձորում առկա ինչպես լավ պայմանները, այնպես էլ՝ դրանց մատչելիությունը:

Որպես հինգերորդ յուրահատկություն նա առանձնացնում է ուտելիքը, մասնավորապես խոսում է վրացական խաչապուրիների եւ կոնյակների մասին:

Վեցերորդ առանձնահատկությունը մարդկանց հյուրընկալությունն ու բարեհամբույր լինելու կարողությունն է: Վիաթրաքը փաստում է, որ ամեն վայր, ուր նա գնացել է, իրեն ցուցաբերել են ջերմ ընդունելություն:

Որպես յոթերորդ կարեւոր փաստ ամերիկացի լրագրողը խոսում է վրացական գինու մասին՝ նշելով, որ այն ե՛ւ էժան է, ե՛ւ մատչելի:

Եվ վերջապես, Վրաստան եւ Հայաստան այցելելու համար Վիաթրաքը նշում է, որ հնարավոր է դա անել էժան թռիչքների միջոցով:

Ð²ðò – ä²î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Üºð

Ðà¶º´²ÜàôÂÚàôÜ

ՓՈՐՁԵՔ «ՀՐԱՇՔ» ԳՈՐԾԵԼ

Արդեն ձանձրացել եմ միապաղաղ առօրյայից, միշտ հիմնախնդիրներ, հիմնախնդիրներ: Երբեմն փորձում եմ կենտրոնանալ, սակայն չի ստացվում: Ինչպե՞ս վարվել:

Վ.Վարդանյան

Ախալքալաքի

Դուք այնքան սրտնեղած եք, որ այլեւս ապրելու ցանկություն չունե՞ք: Ասես ամեն ինչ ձեր դեմ է շրջվել, եւ նույնիսկ փրփուրներից բռնվե՞լ չեք կարողանում... Փորձեք օգնել ինքներդ ձեզ՝ փոխելով ձեր հոգեկան վիճակը:

Բաժակի մեջ մաքուր ջուր լցրեք: Ձեր խնդիրն է այն խմել (եթե նույնիսկ ծարավ չեք զգում), սակայն պետք է խմել շատ դանդաղ կումերով: Հանգստացեք, կենսական լիցքեր հավաքեք:

Խոր շնչառություն. ներշնչեք «լույսը»՝ այն տարածելով ողջ մարմնով: Դեմքի մկանները թուլացնելով իջեցրեք ստորին ծնոտը եւ արտաշնչեք ձեր միջից «վախն ու մթությունը»:

Լեզվով ուժեղ սեղմեք վերին քիմքը: Այդ կերպ ձեր օրգանիզմը տրամադրվում է խոր հակասթրեսային շնչառության, ուղեղում թուլացնող ալիքներ են ծագում:

Ձեռքի ափերը դրեք մեջքին՝ երիկամների շրջանում: Թեթեւ շարժեք ազդրերը: Զգացեք, թե ինչպես է ձեզ պարուրում խաղաղությունը, իսկ հուզմունքը հեռանում է:

²èàÔæàôÂÚàôÜ

ԱՉՔԵՐԻ ՄԱՐԶԱՆՔ

Նկատել եմ, որ համակարգչի մոտ աշխատելիս աչքերս, կարծես հոգնում են: Բնականաբար, ընդմիջում եմ անում, սակայն ոչ երկար ժամանակով, քանզի աշխատանքիս բնույթն է դա: Չգիտեմ, ինչպե՞ս վարվել: Գուցե դուք օգնեք:

Բ.Մանուկյան

Թբիլիսի

Ընդհանրապես աչքերի հոգնածությունը, ներկայիս բազմաբնույթ ճառագայթման (հեռուստացույց, համակարգիչ, դիսպլեյ եւ այլն) պայմաններում, կարելի է բնական երեւույթ համարել: Թեպետ դրա դեմ, ինչ խոսք, պետք է պայքարել: Արյան շրջանառության բարելավման, աչքերի մկանների ամրացման, կնճիռները կանխելու համար՝ շաբաթը 2-3 անգամ կատարեք հետեւյալ վարժությունները: Դրանք շատ ժամանակ չեն խլի: Դուք կարող եք ձեր աչքերը մարզել ցանկացած ազատ պահի:

1. Նստեք ուղիղ, թուլացեք: Սկզբում նայեք ձախ, հետո՝ վերեւ, այնուհետեւ՝ աջ եւ ներքեւ: Աչքերով հակառակ ուղղություններով շրջաններ գծեք: Այս վարժությունը կրկնեք 3-5 անգամ, սկզբում՝ բաց, իսկ հետո արդեն՝ փակ աչքերով:

2. Նայեք վերեւ, հետո՝ ձեր դիմաց ու ներքեւ: 5-8 անգամ կրկնեք վարժությունը նախ բաց աչքերով, հետո՝ փակ:

3. Նայեք առաջ, արագ թարթելով՝ հաշվեք մինչեւ 30-ը: Այնուհետեւ նույնը՝ առանց թարթելու: Կրկնեք 3-4 անգամ:

4. Պինդ կկոցեք աչքերը, հետո արագ թարթեք 10-12 անգամ: Կրկնեք 3-4 անգամ: Մարզանքն ավարտելով՝ աչքերը 1-1,5 րոպե փակեք:

ԱՌՕՐԵԱԿԱՆ

«ՄԵՆՔ ԱՅՆ ԵՆՔ, ԻՆՉ ՈՒՏՈՒՄ ԵՆՔ»

Սա հին հունական ասացվածք է, որը գուցե կարելի է մեկնաբանել հետեւյալ կերպ. պետք չէ հրաժարվել որեւէ մթերքից կամ տառապել զանազան դիետաների դիմելով: Պարզապես պետք է ճիշտ սնվել:

Ամերիկացի Հերբերտ Շելտոնը գտավ մի մեթոդ, որին հետեւելով՝ կարող եք կարգավորել ձեր քաշը: Այդ մեթոդի էությունն այն է, որ անհամատեղելի մթերքներն իրար խառնելու փոխարեն, դրանք պետք է առանձին-առանձին ուտել: Նա ուտելիքները բաժանեց խմբերի: Ըստ նրա, եթե ցանկանում եք գրագետ սնվել, ուրեմն այդ դասակարգումը պետք է անգիր իմանաք այնպես, ինչպես բազմապատկման աղյուսակը եւ տարբեր խմբերի պատկանող մթերքները միասին չուտեք: Այդ խմբերն են.

Սպիտակուցներ - ընկուզեղեն, լոբեղեն, սոյա, միս, ձուկ, հավկիթ, պանիր,

Ճարպեր - սերուցք, թթվասեր, ճարպ, կարագ,

Օսլա - հացաբույսեր, կարտոֆիլ, սիսեռ, արտիշոկ,

Չափավոր օսլա պարունակող մթերքներ - ծաղկակաղամբ, ճակնդեղ, գազար,

Քաղցր մրգեր - բանան, խուրմա, չամիչ, թուզ, սեւ սալորաչիր,

Կիսաթթու մրգեր - բալ, խնձոր, դեղձ, տանձ, ծիրան, մանգո,

Թթու մրգեր եւ բանջարեղեն - նարինջ, արքայախնձոր, նուռ, թուրինջ, կիտրոն, դեղձ, խաղող, լոլիկ:

Տարբեր խմբերի պատկանող մթերքներից կարելի է միայն համադրել օսլան եւ ճարպերը, այսինքն, տապակած կարտոֆիլը կարելի է ճարպի հետ ուտել, բայց կոտլետի հետ՝ ոչ մի դեպքում: Իսկ բուսեղբրողների մասին ընդհանրապես պետք է մոռանալ, քանի որ օսլան չի համատեղվում սպիտակուցների հետ: Կան նաեւ ոչ մի խմբի հետ չհամատեղվող մթերքներ, օրինակ, դդումը: Այն կարելի է ուտել միայն հերթական սնունդն ընդունելուց երկու ժամ հետո: Այդպիսին է նաեւ կաթը, քանի որ դրա մեջ միաժամանակ ե'ւ սպիտակուցներ, ե'ւ ածխաջրեր կան: Ըստ այս մեթոդի երեխաներին մայրիկների կողմից պարտադրվող ապուրներն իսկական փորձություն են ստամոքսի համար: Գրագետ սնվելու համար պետք է պահպանել մի կանոն եւս. ուտելուց կես ժամ առաջ հարկավոր է մեկ բաժակ որեւէ հեղուկ խմել:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

ԹԱՓՎՈՂ ՍՆՆԴԱՄԹԵՐՔՈՎ ԿԱՐԵԼԻ Է ԿԵՐԱԿՐԵԼ ԱՇԽԱՐՀԻ ԲՈԼՈՐ ՍՈՎՅԱԼՆԵՐԻՆ

Աշխարհում տարեկան մինչեւ 400 մլրդ դոլար գումարի սննդամթերք է թափվում: Այդ մասին ասված է Waste and Resources Action Programme (WRAP) բրիտանական կազմակերպության զեկույցում: Աշխարհում արտադրվող ամողջ պարենամթերքի երրորդ մասը չի օգտագործվում, այլ ուղարկվում է աղբանոց, հայտնում են փորձագետները:

WRAP-ի զեկույցի համաձայն՝ միայն ԱՄՆ-ում տարեկան շուրջ 60 մլն տոննա պարենամթերք վերածվում է շուրջ 162 մլրդ դոլար արժողությամբ սննդամթերքի թափոնի: Դրա հետ մեկտեղ 32 մլն տոննան հայտնվում է մունիցիպալ աղբանոցներում, եւ դրանց օգտահանումը տեղի իշխանությունների վրա տարեկան նստում է մոտավորապես 1,5 մլրդ դոլար: Այդ թափոնների այրման հետեւանքով առաջանում է մեթան գազ, որը ջերմոցային էֆեկտ է ստեղծում: Ամբողջ աշխարհում այդ պատճառով տարեկան արտազատվում է 3,3 մլրդ տոննա մեթան (ածխաթթու գազի համարժեքով) կամ ջերմոցային գազերի ողջ արտանետումների 7 տոկոսը:

20-50 տոկոսով սննդի թափոնների ծավալի կրճատումը մինչեւ 2030 թվականը կօգնի տարեկան տնտեսել 120 մլրդ դոլարից մինչեւ 300 մլրդ դոլար: Մեծ Բրիտանիայում սննդի թափոնների նվազեցմանն ուղղված քայլերը օգնել են 2007-2012 թվականներին ծախսերը կրճատել մոտավորապես 13 մլրդ ֆունտ ստեռլինգով (20,2 մլրդ դոլար):

Ռիթեյլերների կողմից դուրս գրված եւ սպառողների կողմից դեն նետված մթերքով հնարավոր կլիներ կերակրել աշխարհի բոլոր 870 միլիոն սովյալներին, պնդում է ՄԱԿ-ի պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպությունը (FAO):

Ինչպես նշում է «Ինտերֆաքս»-ը, տարեցտարի խնդիրն ավելի ու ավելի կսրվի: Եթե գործուն միջոցներ չձեռնարկվեն, բնակչության թվաքանակի աճի համեմատ սննդի համաշխարհային թափոնների արժեքը կարող է տարեկան գերազանցել 600 մլրդ դոլարը:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

* Զարդերը հաճախ հետք են թողնում բաց գույնի հագուստի կամ մաշկի վրա: Դրանից խուսափելու համար նախքան օգտագործելը հակառակ կողմից եղունգների անգույն լաք քսեք:

* Եթե ձեր կոշիկի վրա բիծ է հայտնվել, որը չի մաքրվում, քերիչով միջին չափսի սոխն անցկացրեք, ստացված խյուսը դրեք բծի վրա ու սպունգով շփեք: Լավ չորացրեք եւ այդ հատվածը քացախաջրով մաքրեք, որպեսզի սոխի հոտն անցնի:

* Որպեսզի նոր ջինսը պահպանի գույնի թարմությունը, այն թրջեք թունդ աղաջրում եւ թողեք ողջ գիշեր: Այնուհետեւ լավ պարզաջրեք ու չորացրեք:

* Բնակարանում տհաճ հոտից կարելի է ազատվել սուրճի օգնությամբ: Այն շատ արդյունավետ միջոց է օդը մաքրելու համար: Պարզապես պետք է վերցնել մի բուռ աղացած սուրճ, լցնել պատակարանի վրա եւ լավ տաքացնել (խառնելով՝ բովել):

* Եթե սենյակում տհաճ հոտը հնացած է եւ ներծծվել է պատերի ու կահույքի մեջ, ապա վերը նշված գործողությունը պետք է մի քանի անգամ կրկնել: Ազդեցությունը տեւական դարձնելու համար կարելի է ծաղկամանի մեջ սուրճ (աղացած կամ հատիկավոր) լցնել ու դնել սենյակի մի անկյունում: Իհարկե, ժամանակ առ ժամանակ սուրճը պետք է փոխել:



ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Ամեն ազգ ու ժողովուրդ իր բաժինն է բերում համաշխարհային մշակույթի մթերանոցը: Սակավ չէ մեր բաժինը:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ
(1924-1971)
Հայ գրող

Վա՜յ աշխարհին եւ բոլոր կենվորներին աշխարհի, ովքեր մարմին են տալիս ստին եւ չարին:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՃԱՎՃԱՎԱՁԵ
(1786-1846)
Վրաց բանաստեղծ

Կյանքն ակնթարթ է: Այն հնարավոր չէ սկզբում սեւագրությամբ ապրել, իսկ հետո՝ մաքրագրել:

Ա.ՉԵԽՈՎ
(1860-1904)
Ռուս գրող

Եթե ամուսինները երկար տարիներ սիրում են իրար, ապա սիրահարությունն անպայման դառնում է քաղցր սովորույթ, իսկ բոցավառ կիրքը վերածվում է փաղաքուշ մտերմության:

ԺԱՆ ԺԱԿ ՌՈՒՍՈ
(1712-1778)
Ֆրանսիացի փիլիսոփա

Մարդիկ հաճախ միայնակ են մնում այն պատճառով, որ կամուրջների փոխարեն պատեր են կառուցում:

Ա.ԷՅՆՇՏԵՅՆ
(1879-1955)
Գերմանացի ֆիզիկոս

Գոյություն ունեն երեք թակարդներ, որոնք գողանում են երջանկությունը, անցածի համարափսոսանքը, ապագայի հանդեպ տագնապը եւ ներկայի համար շնորհակալ չլինելը:

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

²Üº Î¸àîÜºð

** Կինը հարցնում է ամուսնուն.*

- Սիրելի'ս, իսկ դու կարո՞ղ ես ինձ համար երկնքից աստղ իջեցնել:

- Իհարկե կարող եմ, սիրելիս:

- Սիրելի'ս, իսկ դու կարո՞ղ ես հանուն ինձ մեռնել:

- Իհարկե կարող եմ, սիրելիս:

- Սիրելի'ս, իսկ դու կարո՞ղ ես այսօր իմ փոխարեն ափսեները լվանալ:

- Դե', ընդհանրապես կարող եմ, բայց եկ առաջին ցանկությունից սկսենք:

** - Առաջին 18 տարին ես ու կինս ապրում էինք երջանիկ...*

- Իսկ հետո՞...

- Իսկ հետո մենք ծանոթացանք...

** Տղամարդը տուն է գալիս կոնֆետների մի մեծ փաթեթ ձեռքին եւ ասում իր չորս փոքրիկներին.*

- Ով միշտ լսում է մայրիկին, երբեք չի հակաճառում, կատարում է նրա բոլոր խնդրանքները, հենց նրան կհասնեն այս կոնֆետները:

Երեխաները միաձայն գոչում են.

- Քեզ, հայրիկ:

** - Գիտե՞ք, բժիշկ, այն դեղը, որ անցյալ անգամ էիք նշանակել, ինձ օգնեց:*

-Դե', ինչ կարող եմ ասել: Երբեմն այդպես էլ է պատահում...

** Ատամնաբույժը դիմում է հիվանդին:*

- Պետք չէ բերանն այդքան մեծ բացել:

- Բայց չէ՞ որ դուք ասացիք, որ պետք է այնտեղ հայելի ու գործիքներ մտցնեք:

- Բայց ես ինքս դրսում եմ մնալու:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԾՐԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարտի 13-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում է ունեցել Հայաստանի նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամների հետ եւ ներկայացրել հանձնաժողովի կողմից մշակված սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի վերաբերյալ իր տեսակետը:

Նախագահը, մասնավորապես, հայտարարեց. «Ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել եմ հայեցակարգի նախագիծը եւ դրա վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունը:

Իհարկե, կառավարման խորհրդարանական համակարգին անցնելու վերաբերյալ մասնագիտական հանձնաժողովի փաստարկներն ու հիմնավորումները ծանրակշիռ են: Միեւնույն ժամանակ քաղաքական ուժերի հետ անցկացված կոնսուլտացիաները ցույց են տալիս, որ այս հարցում չկան եւ օբյեկտիվորեն չեն էլ կարող լինել միանշանակ համընկնող մոտեցումներ. կան կառավարման խորհրդարանական համակարգին թե՛ կողմ, եւ թե՛ դեմ արտահայտվողներ, կան նաեւ ուժեր, որոնք վերջնական կողմնորոշում ունենալու համար կարեւորում են իրենց մասնակցությունն այս գործընթացին, եւ այսպիսի ուժերը շատ ավելի մեծաթիվ են:

Այս ամենով հանդերձ, ես քաղաքական հավանություն կտամ հայեցակարգին, որովհետեւ համոզված եմ, որ պարտավոր ենք օգտագործել մեր պետության համար դրական զարգացում ապահովող ցանկացած հնարավորություն: Առավել եւս, որ իմ հանդիպումների ժամանակ քաղաքական որեւէ ուժ առարկություն չի ունեցել հայեցակարգի հաստատման վերաբերյալ»,- նշեց Հայաստանի նախագահը:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Սահմանադրական բարեփոխումների գործընթացի շրջանակներում, հանդիպումներ է իրականացնում երկրում գործող քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ: Մասնավորապես, Սերժ Սարգսյանը արդեն հանդիպումներ է անցկացրել Միավորված աշխատանքային կուսակցության (ՄԱԿ), Հայ Յեղափոխական Դաշնակցության, «Ժառանգություն», «Ազատ դեմոկրատներ», «Հայոց համազգային շարժման», «Օրինաց երկիր», «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունների ներկայացուցիչների հետ: Քաղաքական ուժերի հետ քննարկումները շարունակվում են:

ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔՆ ԱՃԵԼ Է 3,4 ՏՈԿՈՍՈՎ

Հայաստանի համախառն ներքին արդյունքը 2014 թվականին ընթացիկ գներով կազմել է 4 տրլն 525 մլրդ 875 մլն դրամ, որը 2013 թվականի նկատմամբ աճել է 3,4 տոկոսով, այսինքն՝ նախորդ տարի գրանցվել է 3,4 տոկոս տնտեսական աճ:

Ինչպես նշեցին Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության մակրոտնտեսական ցուցանիշների եւ ազգային հաշիվների բաժնում, 2014 թվականի ՀՆԱ-ի աճը մեծապես պայմանավորվել է գյուղատնտեսության, անտառային տնտեսության եւ ձկնաբուծության ոլորտների 7,8 տոկոս աճով, 2013 թվականի 7,2 տոկոս աճի դիմաց:

Հաջորդ խոշոր ոլորտում՝ արդյունաբերության մեջ, հիմնականում աճ է գրանցել մշակող արդյունաբերությունը՝ 7,7 տոկոս աճ՝ նախորդ տարվա 7,1 տոկոսի դիմաց:

Արդյունաբերության ոլորտի գործունեության տեսակները միասին վերցված չեն նպաստել համախառն ներքին արդյունքի հավելաճին: Շինարարության ոլորտում, ինչպես նախորդ տարի, այս տարի եւս գրանցվել է տնտեսական անկում: Եթե 2013 թվականին գրանցվել էր 10,8 տոկոս, ապա այս տարի՝ 3,3 տոկոս անկում: Ծառայության ոլորտում ՀՆԱ-ի աճի վրա բացասական ազդեցություն են ունեցել կրթության, առողջապահության, բնակչության սոցիալական գործունեությունները, որոնց կշիռը ՀՆԱ-ում կազմում է 7,1 տոկոս: Միասին վերցված դրանք 0,1 տոկոսային կետով բացասական ազդեցություն են ունեցել ՀՆԱ հավելաճին:

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԱՎԵԼԱՑԵԼ Է

Այս տարվա հունվարից ավելացել է Հայաստան Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներից ավտոտրանսպորտային միջոցների ներկրումը:

Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ երկրներից ավտոտրանսպորտային միջոցների ներմուծման դեպքում մաքսատուրքեր չեն կիրառվում: Խոսքը վերաբերում է ոչ միայն ԵՏՄ տարածքում ամբողջությամբ արտադրված ավտոմեքենաներին, այլեւ՝ ԵՏՄ-ում ձեռք բերված տարբեր երկրների արտադրության եւ մակնիշների մեքենաներին, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել են միության ապրանքի կարգավիճակ:

Ընդհանրապես Հայաստանում 2014 թվականին ավտոմեքենաների առեւտրի ծավալը գերազանցել է 88 մլրդ դրամը: Միայն դեկտեմբերին հանրապետությունում գնվել ու վաճառվել են 11 մլրդ 667 մլն դրամ ընդհանուր արժողությամբ մեքենաներ: Դա 4,8 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա դեկտեմբերի արդյունքները, իսկ տարեկան աճը կազմել է 3,9 տոկոս: Ավտոմեքենաների առեւտուրը կազմում է ընդհանուր առեւտրաշրջանառության 3,7 տոկոսը:

Նախորդ տարի 5 տոկոսով ավելացել է նաեւ մեծածախ առեւտրի ծավալը: 2014 թվականի հունվար-դեկտեմբերին Հայաստանում կատարվել է 848 մլրդ 515,5 մլն դրամ ընդհանուր ծավալով մեծածախ առեւտուր: Դա ապահովել է առեւտրաշրջանառության 35,3 տոկոսը:

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ

Հայաստանում զբաղվածության քաղաքականության նոր մոդելի ներդրումից հետո 9,8 տոկոսով ավելացել է զբաղվածության կենտրոն դիմող անձանց թվաքանակը: Զբաղվածության ապահովման նոր մոդելի շնորհիվ, ավելի քան 3 անգամ մեծացել է ակտիվ ծրագրերում ընդգրկված անձանց թիվը՝ դառնալով 7272 անձ:

2014 թվականի ընթացքում աշխատանքի է տեղավորվել 11 հազար 495 աշխատանք փնտրող, որից 793-ը՝ կին: Աշխատանքի տեղավորվածներից 3319-ը եղել են երիտասարդներ: Միեւնույն ժամանակ, տարվա ընթացքում գործակալությանն է ներկայացվել 24 հազար 81 թափուր աշխատատեղ:

Ներդրված նոր ծրագրով աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին մասնակիորեն փոխհատուցվում է աշխատավարձը, իսկ հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար տրամադրվում է աշխատավարձի փոխհատուցում: Այս ծրագրում նախորդ տարի ընդգրկվել է ամսական միջինում 235 գործազուրկ, իսկ 2015-ին նախատեսվում է ընդգրկել 4590 գործազուրկի:

2014 թվականից աջակցություն է տրամադրվում երիտասարդ մասնագետներին՝ աշխատանքային փորձ ձեռք բերելու համար: Ծրագրում ընդգրկվել է 349 երիտասարդ, իսկ 2015-ին նախատեսվում է աջակցություն ցուցաբերել եւս 450 անձի:

ԱՎԵՏԻՍՅԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆԸ

Ավետիսյանների ընտանիքի 7 անդամների սպանության գործով տուժողների իրավահաջորդներն ու նրանց ներկայացուցիչները ներկա են գտնվել քրեական գործով նշանակված դատաձգաբանական, դատահետքաբանական եւ դատաքիմիական համալիր փորձաքննությանը:

Ավելի վաղ նախաքննական մարմինը բավարարել էր տուժողների իրավահաջորդների ներկայացուցչի ներկայացրած միջնորդությունը՝ նշանակված համալիր փորձաքննությանը ներկա գտնվելու վերաբերյալ:

Ավետիսյանների ընտանիքի իրավահաջորդները հարցեր են ուղղել փորձագետներին, ստացել պարզաբանումներ, նրանց տեղեկություններ են տրամադրվել կատարվող փորձաքննության մեթոդների, կատարված աշխատանքի ծավալի, օգտագործված տեխնիկական միջոցների եւ ձեռք բերված արդյունքների վերաբերյալ:

Այնուհետեւ հանդիպում-քննարկում է տեղի ունեցել Հայաստանի քննչական կոմիտեում՝ Հայաստանի քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, ՀԿԳ քննության գլխավոր վարչության պետ Վահագն Հարությունյանի մոտ, որին մասնակցել են տուժողների իրավահաջորդները, նրանց ներկայացուցիչները, Հանրային խորհրդի պետահիրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Գրիգոր Բաղիրյանը, քրեական գործով քննչական խմբի քննիչները:

ԿԱՅԱՑԵԼ Է ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ

Մարտի 12-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հեռախոսազրույց է ունեցել Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:

Սերժ Սարգսյանը եւ Վլադիմիր Պուտինը քննարկել են հայ-ռուսական դաշնակցային գործընկերության առանցքային թեմաները, մտքեր են փոխանակել «Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին Հայաստանի միանալու մասին» պայմանագրի՝ հունվարի 2-ին ուժի մեջ մտնելուց հետո ինտեգրացիոն գործընթացների հետագա զարգացման շուրջ:

Հեռախոսազրույցի ընթացքում երկու երկրների ղեկավարները համաձայնեցրել են իրենց առաջիկա հանդիպումների ծրագրերը՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի եւ Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի 70-ամյակի կապակցությամբ անցկացվելիք միջոցառումներին համատեղ մասնակցության շրջանակներում:

ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆԸ՝ «ՀԱՅԿՅԱՆ» ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Հայաստանի երիտասարդական հիմնադրամը Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին է շնորհել «Հայկյան-2014» մրցանակ: Այն պաշտպանության նախարարին տրվել է «Երիտասարդական ոլորտին առավելագույնս աջակցած պետական գործիչ» անվանակարգում:

ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԸ

ՆԻՍ ՊԱՏՎԻՆ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ԵԼ ԿՄԱՏՈՒՅՑՎԻ ՍԳՈ ՊԱՏԱՐԱԳ



Մարտի 7-ին կյանքի 69-րդ տարում վախճանվել է Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տեր Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանը:

Հանգուցյալ Սրբազանի վերջին օծման կարգը կատարվել է Ուկրաինայի հայոց թեմում: Հուղարկավորության արարողությունը անցկացվեց մարտի 11-ին, Սուրբ Գայանե վանքում: Գրիգորիս Սրբազանի մարմինը ամփոփվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանական գերեզմանատանը:

Նշենք, որ Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանը Ամենայն Հայոց Կաթողիկոսներ Գարեգին Առաջինի եւ Գարեգին Երկրորդի՝ Թբիլիսի կատարած այցի ժամանակ, ընդգրկված էր Սուրբ Էջմիածնի պատվիրակության կազմում:

Մարտի 15-ին, կիրակի օրը վիրահայոց եկեղեցիներում կմատուցվի հոգեպանգիստ-պատարագ ի հիշատակ Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանի:

ԿՄԱՍՆԱԿՑԵՆ ԲԱՔՎԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ

Հայաստանը կմասնակցի Բաքվում կայանալիք առաջին Եվրոպական խաղերին: Այս մասին ասաց Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի գլխավոր քարտուղար Հրաչյա Ռոստոմյանը՝ ներկայացնելով մարտի 10-ին գումարված ՀԱՕԿ գործկոմի հերթական նիստի արդյունքները:

Նիստի ժամանակ քննարկվել է Բաքվում կայանալիք Եվրոպական առաջին ամառային խաղերին հայ մարզիկների մասնակցության հարցը: ՀԱՕԿ նախագահ Գագիկ Ծառուկյանն ՀԱՕԿ գլխավոր քարտուղար Հրաչյա Ռոստոմյանին հանձնարարել է ամենասեղմ ժամկետներում բարյր մակարդակով իրականացնել կազմակերպչական աշխատանքները՝ խաղերին հայ մարզիկների մասնակցությունը լավագույնս ապահովելու համար:

Առաջին Եվրոպական խաղերը կանցկացվեն Բաքվում 2015 թվականին: Նման որոշումն ընդունվել էր 2012 թվականին Եվրոպական օլիմպիական կոմիտեի նիստում:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՐՏ

15.03.2015. Դատավորի կիրակի

Մեծ Պահքի հինգերորդ կիրակին կոչվում է Դատավորի: Այդ օրվա խորհուրդը բացատրում է այրի կնոջ եւ դատավորի մասին առակը:

21.03.2015. Սուրբ Գրիգոր Լուսավորչի սոսկալի չարչարանքների ու Վիրապ մտնելու հիշատակության օր

Հայ առաջին կաթողիկոս Սուրբ Գրիգոր Լուսավորչին նվիրված երեք հիշատակության օրերից՝ տարվա մեջ առաջինն է: Ըստ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու տոնացույցի՝ նշվում է Մեծ պահքի 6-րդ կիրակիի նախորդ շաբաթ օրը: Տոնը կատարվում է ի հիշատակություն Խոր Վիրապում Սուրբ Գրիգոր Լուսավորչի կրած չարչարանքների:

ԻՐ ԳՈՐԾԻ ՆՎԻՐՅԱԼԸ

ՏԻԿԻՆ ԹԵԿԼԵ, ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

Կյանքում կան մարդիկ, ովքեր իսկապես արժանի են գովասանքի եւ չես կարող անտարբեր անցնել նրանց կողքով, ովքեր ամբողջ սրտով նվիրվում են իրենց գործին: Նրանք լուսավորություն ու բարություն են սփռում իրենց շրջապատում: Ահա այդպիսիներից է Ախալքալաքիի մունիցիպալիտետի գրադարանների տնօրեն՝ Թեկլե Վախթանգիշվիլին: Նա ծնվել է Ախալքալաքիի շրջանի Խոսպիո գյուղում: Թեկլե Վախթանգիշվիլին մեր երկրամասի արժանի դուստր է, բազմաբեղուն է նրա անցած աշխատանքային ուղին՝ գրեթե կես դար: Նա բնավորությամբ պարզ է ու հասարակ, նա պարտաճանաչորեն է կազմակերպում ամենամսյա սեմինարները, կազմակերպում է գրքի ցուցահանդեսներ, նրա շնորհիվ է, որ գործում են թե' շրջանի, թե' գյուղերի գրադարանները:

Վերջերս նա հաղթահարելով բազում դժվարություններ, իր աշխատողների հետ մեկնեց Թբիլիսի եւ ֆոնդը համալրեց նորանոր հայ եւ վրաց գրականությամբ, որը մեծ ուրախությամբ ընդունվեց ընթերցողների կողմից:

Օգտվելով առիթից՝ մի խումբ աշխատողների կողմից ուզում ենք շնորհավորել տիկին Թեկլեին Մարտի 8-ի եւ կանանց միամսյակի կապակցությամբ, նորանոր հաջողություններ անձնական եւ աշխատանքային կյանքում, մեր սիրելի տնօրեն: Ցանկանում ենք քաջառողջություն եւ երկաթյա կամք:

Բարալեթ գյուղի գրադարանավարուհի ԱՆՆՄԱՆ ԱԲՈՅԱՆ
Ախալքալաքիի շրջան

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆ

Վրաստանի երիտասարդության եւ սպորտի հարցերով նախարարությունը, կրթության նախարարության եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ մեկտեղ, սկսում է լայնամասշտաբ դպրոցական մարզական օլիմպիադան:

Օլիմպիադայում ներգրավվել են 11 քաղաքների դպրոցական թիմեր: Իրենց մարզական խմբերն են ներկայացրել Թբիլիսին, Բաթումին, Մցխեթան, Գորին. Ռուսթավին, Թելավին, Ախալցիխեն, Քութայիսին, Օզուրգեթին, Զուգդիդին եւ Ամբրոլաուրին: Օլիմպիադայում կխաղարկվեն մրցանակներ չորս մարզաձեւերում՝ բասկետբոլ, սեղանի թենիս, մինի ֆուտբոլ եւ թեթեւ ատլետիկա, ինչպես նաեւ կանցկացվի «Ուրախ մեկնարկ» մրցաշարը:

Օլիմպիադայի բացման հանդիսավոր արարողությունը կանցկացվի վաղը՝ մարտի 15-ին, Մցխեթայում, իսկ եզրափակիչ մրցաշարերը Անակլիայում՝ «Ապագայի ճամբարում»: Մարզական օլիմպիադայի հովանավորն է «IDS Բորժոմի-Վրաստան» ընկերությունը:

ՓԱՌԱՏՈՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՐՑԱՄԱՐՏ՝ ՎՐԱՍՏԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԽՄԲԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Թբիլիսիում, ապրիլի վերջին-մայիսի սկզբներին կանցկացվի Tbilisi JAM! Fest 2015 միջազգային երաժշտական փառատոնը: «Դրանք կլինեն երաժշտական նոն-ստոպ խենթության երեք օրեր»,- հայտարարում են կազմակերպիչները, որոնց խոսքով՝ lineup-ը (մասնակիցների կազմը) մշտապես համալրվում է:

«Մենք մտադիր ենք Թբիլիսիի բնակիչների եւ մայրաքաղաքի հյուրերի համար կազմակերպել միասնության եւ ազատության անմոռանալի տոն: Թբիլիսիի ծովի տարածքում կստեղծվի Հարավային Կովկասի իսկական երաժշտական մայրաքաղաք»,- նշեցին JAM! Events համերգային գործակալության եւ Թբիլիսիի Ռոք-երաժշտության ազգային ասոցիացիայի ներկայացուցիչները:

Արդեն հայտնի է, որ փառատոնին կժամանեն Diary of Dreams-ը, Սլոթ-ը եւ The Fading-ը: Երեք օր շարունակ հանդիսատեսի առջեւ ելույթ կունենան Վրաստանից, Հայաստանից, Ադրբեջանից, Ուկրաինայից, Ռուսաստանից, Գերմանիայից, Մեծ Բրտիտանիայից, ԱՄՆ-ից, Իսրայելից, Թուրքիայից ժամանած երաժիշտներ ու խմբեր:

Փառատոնի շրջանակներում Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի կոլեկտիվները միմյանց մարտահրավեր կնետեն W.O.A Metal-Battle Caucasus! երաժշտական մենամարտում: Հաղթողը կուղեւորվի Գերմանիա, որպեսզի Wacken Open Air-ում ներկայացնի ամբողջ Հարավային Կովկասը:

Փառատոն-ակցիային աջակցելու պատրաստակամություն են հայտնել Գյոթեի ինստիտուտը, Վրաստանում Իսրայելի դեսպանությունը, Թբիլիսիի քաղաքապետարանը: Որպես փառատոնի գլխավոր գործընկեր հանդես է եկել ուկրաինա-վրացական BE.GE ինտերնետ-խանութը: Փառատոնի տոմսերը կարելի է ձեռք բերել biletebi.ge կայքում:

ԴՊՐՈՑ

ԳԱՐՈՒՆ Է...

Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցում գործող «Ոսկե փետուր» գրական ակումբը նշեց արդեն ավանդույթ դարձած գարնանամուտը:

Դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանն իր շնորհակալական խոսքն ասաց ծնողներին, որոնք ամեն կերպ աջակցեցին դահլիճի վերանորոգման աշխատանքներին:

Ընթերցվեցին Վ.Տերյանի, Հովի.Շիրազի, Գ.Էմինի եւ մի շարք այլ բանաստեղծների գարնանը նվիրված ստեղծագործություններ: Իրար էին հաջորդում ակումբի մասնակիցների գեղեցիկ ու տպավորիչ ասմունքներն ու երգերը՝ ալեկոծելով ունկնդիրների սրտերը:

Միջոցառմանը ելույթ ունեցան Թբիլիսիի Պ.Ադամյանի պետական հայկական դրամատիկական թատրոնի վաստակավոր արտիստ Ռոբերտ Հովհաննիսյանը, հայ երաժիշտների միության նախագահ Ա.Կիրակոզովը: Ավարտին՝ «Վանք» դպրոցական պարի խումբը (ղեկ.՝ Լ.Կաշավանիձե) իր հեզաճկուն, գեղեցիկ համարներով հիացրեց բոլորին:

ԱՂՈՒՆԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ
10-րդ դասարանի աշակերտուհի

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԻ

ՍԿՍՎՈՒՄ Է ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՏԱԺԱՎՈՐՈՒՄ ԱՆՑՆԵԼ ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Մարտի 16-ին սկսվում է պետական գերատեսչություններում ստաժավորում անցնել ցանկացողների գրանցման երկրորդ փուլը: Ուսանողներն իրենց տվյալները կարող են տեղակայել տվյալների բազայում, www.stajireba.gov.ge. կայքէջում:

2014 թվականի սեպտեմբերին, ստաժավորման պետական ծրագրի շրջանակներում, գրանցվել էին 1351 ուսանողներ եւ շրջանավարտներ, որոնցից տարբեր պատճառներով (անձնական դիմումի համաձայն հրաժարվեցին ստաժավորումից, անհարգելի պատճառով ունեցան բացակայություններ եւ այլն) ծրագիրը հաջողությամբ ավարտեցին 908 դիմորդներ: Նշենք, որ ստաժավորումն անցնելուց հետո հանրային տարբեր հաստատություններում աշխատանքի տեղավորվեց 49 դիմորդ:

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՍԿՍՎԵՑ ՄԱՐՏԻ 10-ԻՑ

Քննությունների Ազգային կենտրոնը մարտի 10-ից սկսել է առարկայական քննությունների համար ուսուցիչների գրանցումը:

Քննությունները կարող են հանձնել միայն գործող մանկավարժները: Գրանցումը կշարունակվի մինչեւ մարտի 25-ի ժամը՝ 18.00-ը:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Ոչ զգայուն, չզգացող: 6. ... փիսո: 10.Ըմբշամարտով զբաղվող մարզիկ: 11.Կոկորդի հիվանդություն: 13.Թուրքիայի դրամական միավոր: 14.Բախտավոր (հոմանիշ): 18.«... զքեզ Հայոց աշխարհ»: 21.Գետ Հայաստանում: 23.Հատակի քսուք: 24.«... քեզ ալ վարդերը չեն բուրում սիրավառ» (երգ): 27.Բնազդաբար, ակամայից: 29.Ամերիկյան տիկնիկ: 33.Խռով, ոչ հաշտ: 34.Ծովային անողնաշարավոր: 35.Երկարության եվրոպական մեծություն: 36.Հաճախորդ: 37.Վրաստանին բարեկամ երկրի մայրաքաղաք: 39.Պետություն Ամերիկայում (հապ.): 41.Վեգ (բրբ.): 42.Մետրոյի կայարան Թբիլիսիում: 43.Ներկա եղող: 45. ... կարելի: 46. ... Նորիս: 48.Ստորադասական շաղկապ: 49.Սփյուռքահայ գրող ... Քաչա: 51.Հայաբնակ տարածաշրջան Վրաստանում: 53.Համով, հոտով կանաչի: 54.Պարսկական ատամի մածուկ: 56.Հայաստանի առաջին տիկին ... Սարգսյան:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Ասեւամորթ 3.«... մեկ-մեկ արի, տեսնեմ»: 4.Թբիլիսահայ թատրոնի ժողովրդական արտիստուհի ... Ստեփանյան: 7.Վերջի, ավարտի հականիշը: 8.«... Գեղեցիկ եւ Շամիրամ»: 9.Պտուղ, միրգ: 12.Ուրարտական թագավոր: 15.Փաստաթղթեր վավերացնող: 16.Թմրանյութի տեսակ: 17.Կինոնկար: 19.Խաղաթղթի տեսակ: 20.Ցուցական դերանուն: 22.Ավտոմեքենայի մաս: 25.Ահաբեկող, սարսափեցնող: 26.Վրաստանում աճող մրգատեսակ: 27. ...-աղաղակ: 28.Հայ երիտասարդ երգիչ: 30.Առանց խնայելու: 31.Հաշվապահական տերմին: 32.Խոզի սիրելի ուտելիքը, տխիլ: 38.Աշխատավարձ, ռոճիկ: 40.Նոտա: 43.Սոված (բրբ.): 44.Թունավոր օձ: 45.Պարպուտուտիկ, պուտերով: 47.Կշռելու գոծիք: 49. Պատմական քաղաք Թուրքիայում: 50.Թբիլիսյան պոետ ... Գյուրջի: 51.Սասնա ...: 52.Հայաստանի մայրաքաղաքներից: 55. ... ու սարսափի մեջ պահել:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Բարունակ: 9.Ուռենի: 10.Խառն: 11.Իզմայիլ: 13.Անտոն: 16.Աուտ: 17.Տաո: 19.Անմիտ: 22.Ընտիր: 24.Փրեսլի: 25.Հոմս: 27.Կարասի: 29.Լիթիում: 32.Կքանիստ: 33.Թրակիա: 35.Ալեք: 37.Ապե: 39.Սկալա: 40.Յարա: 43.Վիշ: 44.Վերխ: 47.Գեր: 49.Գառզու: 50.Անեփ: 53.Լոտո: 54.Գոմ: 55.Գուցե: 57.Վեա: 58.Անաթոռ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Պաուզա: 2.Բուլատ: 3.Ռախիտ: 4.Հունա: 5.Վերտ: 6.Հիմն: 8.Կալան: 12.Մուլտ: 14.Նունե: 15.Ոջիլ: 18.Կրոս: 19.Արշին: 20.Մստիսլավ: 21.Տիղմ: 23.Իհարկե: 26.Միկա: 28.Աուրա: 29.Լաո: 30.Թիակ: 31.Ուտելիք: 34.Ապարատ: 36.Քաշ: 38.Տրե: 41.Ագուգա: 42.Արամա: 45.Եգոր: 46.Խռով: 48.Դեգա: 51.Փութ: 52.Լեռ: 56.Ցո:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445